ռաքինեայն ակնարկեալ միւսանգամ ես, և հառաչանս յերկինս 'ի վեր հառաչէր. և յորդահոս արտասուօքն ըղձալ զինուորացն Քրիստոսի և ազգին միանգամայն Թանալով զմարմինսն՝ խոնարհէր անկանէր յերկիր, և բարեխնամ կամայն Աստուծոյ ամենեն նուէր ախորժական ընծայեալ կամակար զանձն բոլանդակ՝ երդմունս կնքէր անստելիս սիրոյն Աստուծոյ և սիրոյ հայրենի աշխարհին 'ի զոհ մատչել ըղձակաթ: Այս ամենեն զուարթացեալ 'ի հոգին եւ կանգնեցաւ յոտին, բարձրացաւ յերկրէ ընդ նմա և բաղդ աշխարհին. ամպամած տխուր երկինք պարզեցան զգլխով նորա, գիտաց յանձն իւր եթէ ձայնք նուիրացն ելին 'ի գահխրայն Աստուծոյ, և ընդ նուէրն հաճեցան երկինք. և անդ ձայն օրհնութեան յերկինս 'ի վեր կարդալով՝ որացեալ մուտ 'ի յաշխարհն, մխիթար լքելոցն լինէր, զվատս խրախուսէր, քաջաց ձեռն տայր, հիւանդաց 'ի Թիկունս հասանէր, և ամենեցուն համօրէն խրախոյս բարձեալ ձայն տայր պինդ կալ յասպարիզի նահատակութեանն, մինչև յերկնից լցի վրէժխնդրութիւն անպարտ արեանցն և աղետից աշխարհին:

Այլ զի՞ է զի մինչև 'ի համաշխարհական Ճակատամարտն Արտազու զումարեալք 'ի մի, երանելին Ղևոնդ եւեթ խոյասցի ընդդէմ բիւրաւոր ջոկատուն արեաց արքայի. հիմ եպիսկոպոսք և կաթուղիկոսունք 'ի մահապաշակ ահաւոր պահու մարտին զՂևոնդ յառաջ մատուցանեն 'ի խրախուսել զզօրսն Ճակատեալ, հիմ 'ի բանտի, հիմ 'ի հարցափորձ տանջանս, հիմ յատենի մեծի հազարապետին, հիմ 'ի մոլեգնեալ խումբս խուժանին զՂևոնդ յառաջ ընծայեն 'ի պատասխանատրել. Ներեսցի ինձ ապա եթէ զՂևոնդ Թիկունս հայաստանեայց համարեցայց առաքեալ յԱստուծոյ, իբրև զՄովսէս առ ժողովուրդն յԵգիպտոս պանդխտեալ. և իբրև զՀարոն և զՅեսու, կամ զԵղիազար և զԾերսն զեօԹանեսին աջակիցս Մովսիսի 'ի գործ առաքելութեանն՝ համարեցայց զգաստ պաշտօնէիցն Աստուծոյ երանելւոյն Ղևոնդեայ աջակիցս 'ի գործն մեծասքանչ վճռեալ յԱստուծոյ: Այլ աստէն քանի՞ խտիր մեծ տեսանեմ ես ընդ Մովսէս և ընդ Ղևոնդ. Մովսիսի անդ Աստուած ինքնին առաջնորդ սեամբ ամպոյ և հրոյ, այլ Ղևոնդեայ 'ի զօրավիգն ոչ բարբառք յերկնից և ոչ տեսիլք երկնայինք. անդ Մովսէս հերձեալ զծով 'ի հանգիստ զժողովուրդն հանէ, և աստ Ղևոնդ ընդ տագնապն անցեալ անհնարինս և ընդ վիշտս դժոխըմբերս. անդ Մովսէս փառաւորեալ յԻսրայէլ և 'ի հեթանոսս, և աստ Ղևոնդ 'ի ժանիս կատաղութեան մատնեալ արանց արիւնարբուաց. Մովսիսի ամենայն ինչ յաջողեալ, այլ Ղևոնդեայ ոչ աղէտք ոչ վիշտք, և ոչ դառն կտտանք բաւեն ինչ, հա՞րկ է զի և զարիւն իւր անգամ բոլանդակ հեղցէ մտադիւր. քանզի հայաստան աշխարհ ոչ հանգեաւ և ոչ պարգևք խնդութեան ելին զեղան 'ի հայրենին մեր երկիր, մինչև ոչ յապառաժս քարշեալ և յարեան իւրում Թաւալեալ նուիրեցաւ 'ի հաճոյն Աստուծոյ երանելին Ղևոնդ, մինչև ոչ 'ի հոտ անուշից սիրոյ ողջակիզի պաշտօնէին սրբութեան հոտոտեցաւ Աստուած 'ի բարձանց:

(ԱՒԱՐՏՆ ՅԱՌԱՋԻԿԱՅՍ)

---

ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ

ԻԲՐԵՒ Ապրիլ ամսուն առաջարկութեանը հետևանք ցուցընել՝ թէ ազգի մը քաղաքականութեան, գիտութեանց և արուեստից մէջ ունենալու յառաջադիմութեան արգելքները որո՞նք են. և թէ արդեօք մեր ազգին մէջ ալ կա՞ն այնպիսի արգելքներ: Եւ թէ որ կան ի՞նչպէս դարման կրնայ տալուիլ անոնց: